Քաղաքական այս իրավիճակին մէջ Հոլանտա կը մնար Եւրոպայի առեւտրական գլխաւոր կեդրոններէն. հայ առեւտրականներ աշխուժ գործունէութիւն ունէին Ամսթերտամի եւ մասամբ նաեւ՝ այլ նաւահանգիստային քաղաքներու մէջ եւ կարեւոր դիրք կը զբաւէին տեղական առեւտրական շուկային վրայ: Անոնցմէ շատեր Չմիւսիոյ հետ առեւտրական գործառնութիւններ կը կատարէին եւ թէ՛ ներածումով ու թէ՛ արտածումով կը զբաղէին: Գրեթէ բոլոր մեծ առեւտրականներն ալ տուներ եւ մասնաճիւղեր ունէին Վենետիկի, Լիւդուոյի, Մարսէյի եւ Չմիւսիոյ մէջ, ոմանք՝ նաեւ Սպանիոյ մէջ: Այդ առեւտրականները յաճախ ամբողջ ընտանիքով կամ գերդաստանով կ'աշխատէին եւ առեւտրական իւրաքանչիւր տան կամ մասնաճիւղի մէջ անոնց ընտանեկան պարագաներէն կամ ազգականներէն մէկը կը նստէր:

Ամսթերտամի հայկական առեւտրական տունները ապրանք կը ստանային դուրսի իրենց մասնաճիւղերէն կամ իրենք հոն ապրանք կ'ուղարկէին: Չմիւսիոյն եւ ընդհանուր առմամբ Արեւելքէն կը ներածէին պարսկական հում մետաքս, գործուածքներ, գորգեր, մորթեր, մագեղէն, դիմի եւ այլն. այդ ապրանքները Ամսթերտամի նաւահանգիստը բերուելէն ետք, այլ նաւերու վրայ բեռնուելով, կ'ուղարկուէին Պալթեան երկիրներու նաւահանգիստները, եւ փոխարէնը այդ երկիրներէն կը ստանային գլխաւորաբար սաթ եւ այլ ապրանքներ, որոնք Ամսթերտամի նաւահանգիստը հասնելէն ետք կ'ուղարկուէին Չմիւսիոյ: Իսկ Հոլանտայէն անոնք կը գնէին տեղական գործուածքներ, ատուելէն, մանածոյ կերպասեղէն, կահ կարասի, տնային գարդի առարկաներ եւ այլն:

Գաղութիւն մէկ մասը անհատ վաճառականներ էին, որոնք որոշ ժամանակ կը մնային եւ յետոյ կը հեռանային. բայց յետոյ շատեր իրենց ընտանիքները եւս բերել տալով՝ մնայուն բնակութեան հիմեր դրին: Ոմանք ալ հոլանտացի աղջիկներու հետ ամուսնացան:

Այս ժամանակաշրջանին հոլանտահայ դա-

ղութիւն յիշուած են հետեւեալները. Սեֆէր, որ տեղացի վան Հալսդի պարտատէր ըլլալով՝ 1658-1659 տարիներուն վէճ եւ հարցեր ունեցած է անոր հետ: Յակոբ որդի Ստեփանի, որ 1667ին յիշուած է իբրեւ պարտատէր հոլանտացի վաճառականներու: Մովսէս Գալուստեան անկուրացի վաճառականը եւ անոր ընկերակից Գրիգոր Սարուխան, որոնք յիշուած են 1667ին: Առաքել ձերբուկ վաճառականը, որ Պարսկաստանի կիսին նահանգէն մետաքս կը ներածէր Ամսթերտամ եւ հոնկէ ալ տարբեր տեսակի ապրանքներ կ'արտահանէր դէպի Սպահան:

Նոր Զուղայեցի Շահրիմանեան (Շահրիմանեան կամ Շահրիման) առեւտրականներու համբաւաւոր ընտանիքը բեղուն գործունէութիւն ունէր ուսուական, եւրոպական եւ հնդկական շուկաներուն վրայ եւ շատ մը ապրանքներու առեւտուրը մենաշնորհի վերածած էր: Անոնցմէ Գասպար, որ ընտանիքի կարգ մը անդամներու հետ Վենետիկ փոխադրուեցաւ, առեւտրական գործունէութիւններ ունէր նաեւ Ամսթերտամի հետ եւ որոշ ժամանակ հոն ընակութիւն հաստատեց: Ան Ամսթերտամի մէջ ձգած իր մէկ զիրքին վրայ արձանագրած է իր անունը եւ թուականը՝ 1670:

ՎԻԼԼԵՄ Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐ

Հոլանտայի մէջ հանրապետական - օրանիստ պայքարի պայմաններուն տակ հրապարակ իջաւ Օրաններու տան ժառանգորդ Վիլլէմ Գ. իշխան-գաւազը՝ Վիլլէմ Բ. Օրանի եւ Անգլիոյ Չարլզ Ա. Թագաւորի դուստր՝ Մէյրիի, ան ծնած էր հօր մահէն ութ օր ետք, 4 (14) Նոյեմբեր 1650ին: Ան

Ընդհանուր Նահանգներէն հինգին կառավարիչ հռչակուեցաւ եւ հակադրուեցաւ Ամսթերտամի մէջ կեդրոնացած հանրապետականներուն:

Ֆրանսայի Լուի ԺԴ. եւ Անգլիոյ Չարլզ Բ. Թագաւորները 1671ին որոշեցին քայլի հանրապետական Հոլանտայի վրայ եւ Վիլլէմի առաջարկեցին ստանձնել արշաւող բանակին հրամանատարութիւնը: Վիլլէմ համաձայն գտնուեցաւ եւ 1672 Փետրուարին հրամանատար հռչակուեցաւ: Մարտին եւ Ապրիլին Ֆրանսական եւ անգլիական բանակները շարժեցան Հոլանտայի վրայ: Յունիսի Ֆրանսական բանակը անցաւ Հոնոսուր եւ արագօրէն գրաւեց երեք նահանգներ: Հողթուամբերուն շուրջ, Վուրի գիծ»ին վրայ կատարի կռիւներ մղուեցան: Հանրապետականները պարտուած՝ տեղի տուին, եւ 8 Յուլիս 1672ին Վիլլէմ Գ. նահանգներու հաւաքին կողմէ կառավարիչ հռչակուեցաւ: Անոր առաջին գործը եղաւ խաղաղութիւն եւ կարգ ու կանոն հաստատել:

Քանի մը ամսուան խաղաղութենէ ետք, 1672ի աշնան Հոնմէական Սրբազան կայսրութեան Լէոփոլտ Ա. կայսր, Պրանտեպուրկ եւ 1673ին ալ Սպանիա միանալով Հոլանտայի դէմ պատերազմի ձեռնարկեցին: Վիլլէմ Գ. արագօրէն վերակազմեց բանակը եւ 1673 Սեպտեմբերին վերագրաւեց Նաարտիսի ամրոցը: Այնուհետեւ ան քայլեց Քէօլի վրայ եւ Նոյեմբեր 12ին գրաւեց Պոնը: Նոյն օրերուն Ֆրանսացի պարպեցին Հոլանտան: Չարլզ Բ. եւ Լուի ԺԴ. փորձեցին խաղաղութիւն պարտադրել, սակայն հոլանտական յաղթական բանակը ներխուժեց Ֆլանտրիա՝ ի վերջոյ խաղաղութիւն հաստատուեցաւ 1678ի եւ 1679ի շարք մը դաշնագիրներէ ետք:

Վիլլէմ Գ. 1677 Նոյեմբերին ամուսնացաւ զարմուհիին՝ Մէյրիի հետ, գաւազը երթի դուքսին (հետագային Անգլիոյ Թագաւոր ձէյմս Բ.) Վիլլէմ, որ արդէն չորրորդ ժառանգորդը կը նիկատուէր Անգլիոյ գահին, այս ամուսնութեամբ յաւանորդ ներկայացաւ:

Անգլիոյ ձէյմս Բ. Թագաւոր 1688ին գաւազ ունեցաւ, որուն պատճառով Վիլլէմի Անգլիոյ գահին յաւանորդութիւնը ի դերեւ ելաւ: Նոյն տարուան Յուլիս 10ին եւ յետոյ ալ Նոյեմբերին Վիլլէմ Գ. իր բանակով եւ նաւատորմով Բրիտանիոյ վրայ քայլեց եւ Թոր Պէյի Պրիքսհամ շրջանը ցամաք ելաւ: ձէյմս Բ. Ֆրանսա փախաւ. Անգլիոյ բողոքական խորհրդարանը 1689 Յունուարին կաթոլիկ ձէյմս Բ.-ը գահընկէց հռչակեց եւ Վիլլէմն եւ Մէյրիին գահին ժառանգորդը հռչակեց: Անոնք Փետրուարին Թագաւոր եւ Թագուհի հռչակուեցան եւ Ապրիլ 21ին օծուեցան: Նոյն օրերուն Սկոտլանդի գահը եւս իրենց յանձնուեցաւ:

Անգլիոյ մէջ անարեւն յեղափոխութիւնը յաջողեցաւ, բայց Սկոտլանդի եւ Իրլանտա գիւնուած դիմադրութիւն կազմա-



կերպեցին: Սկոտլանդի մէջ Թագաւորին հաւատարիմ Քէյմպլըները 1692 Փետրուարին կազմակերպեցին կյէն Քոէի ջարդը: Իրլանտայի մէջ կռիւները սաստկացան, երբ ձէյմս Բ. Ֆրանսական օգնական ուժերով հոն ցամաք ելաւ: Վիլլէմ Գ. եւ Լէոփոլտ Ա. 1689 Մայիսին Վիեննայի մէջ դաշինք կնքեցին եւ Ֆրանսայի դէմ պատերազմ հռչակեցին, մինչեւ որ 1697ին խաղաղութիւն հաստատուեցաւ:

Վիլլէմ աշխատեցաւ Անգլիոյ եւ Հոլանտայի միջեւ «Մեծ միութիւն» հաստատել: 1701 Սեպտեմբերին ձէյմս Բ. մահացաւ քսութի մէջ, եւ Լուի ԺԴ. անոր գաւազը Անգլիոյ Թագաւոր հռչակեց եւ պատերազմի ձեռնարկեց Անգլիոյ դէմ, բայց մինչ այդ Վիլլէմ մահացաւ 1702 Մարտին:

Պատերազմները եւ քաղաքական վերլիայ-րուամերը իրենց անդրադարձը ունեցան եւրոպական առեւտուրին վրայ, թէեւ հայ վաճառականները, շնորհիւ իրենց լայնածիր կապերուն, երկար ժամանակ յարաճուեց թափով շարունակեցին իրենց գործունէութիւնը:

Նշենք, որ կային հոլանտական դրօշի տակ գործող հայկական առեւտրական նաւեր

ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՀՌԶԱԿ ՆԿԱՐԻՉ ՌԵՄՊՐԱՆԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոլանտացի աշխարհահռչակ նկարիչ Ռեմպրանթի հայկական ծագման մասին արտայայտութիւններ եւ փաստարկութիւններ եղած են տարբեր ժամանակներու վեհեր:

Հարմենսոն վան Ռեյն Ռեմպրանթ (Harmenszoon van Rijn Rembrandt) ծնած է 15 Յուլիս 1606ին, Լէյտեհ: Հարմենսոն հոլանտերէն կամ ֆլամաներէն կը նշանակէ հայու որդի («Հարմենս») կամ «Արմենս» հայու, «սոն» կամ «գոն» որդի, տղայ): Հայրը՝ Հարմեն Կերրիքսոն վան Ռեյն ջրղացի էր, մայրը՝ Նեկիթի վան Չույպրոէր հացբոխ: Աւանդութեան համաձայն, վան Ռեյնները բնիկ չուղայեցիներ էին, որոնք հաւանաբար շահ Արասի բոնագաղթին ժամանակ փախուստ տալով Եւրոպա մտան եւ Հոլանտա հասնելով Լէյտեհ՝ Հոնոսի փախուցումը բնակութիւն հաստատեցին, ստանալով վան Ռեյն (van Rijn) ազգանունը. վան պատկանելիութիւն կը նշանակէ (ինչպէս գերմաներէն վոն կամ ֆրանսերէն տը), Ռեյն՝ Հոնոսեհ, Հոնոսի փախուցումը բնակիչ իմաստով: Նշենք, որ վան Ռեյն ազգանունը կրող ընտանիքներ կան Հոլանտայի եւ Պելդիքայի մէջ: Ռեյն գերդաստանը մնացած էր կաթոլիկ, երբ Լէյտեհ գրեթէ ամբողջութեամբ բողոքական դարձած էր. միայն Հարմեն՝ Ռեմպրանթի հայրը առանձին բողոքական դարձած էր:

Ռեմպրանթ ուսում ստացաւ ծննդավայրի Լատինական դպրոցին մէջ եւ 1619ին մտաւ Լէյտեհի համալսարանը. բայց որովհետեւ նախաիրութիւնը կ'երթար արուեստին, 1620ին սկսաւ գեղանկարչութիւն սորվիլ Եւրոպ վան Սվանեմպուրկի արուեստանոցին մէջ: 1623ին փոխադրուեցաւ Ամսթերտամ, ուր քանի մը ամիս ուսանեցաւ պատմական թեմաներու նկարիչ Փիեքքը Լասքմանի արուեստանոցին մէջ:

Վերադառնալով Լէյտեհ նոյն տարին՝ 1623ին սեփական արուեստանոց բացաւ զբաղելով նկարչութեամբ: 1631ին հաստատուեցաւ Ամսթերտամ, ուր 1634ին ամուսնացաւ Սասքիա վան Ույլեմպուրկի հետ: Ունեցաւ չորս զաւակ, բայց անոնցմէ վերապրեցաւ միայն մէկը՝ Տիտոս (Titus):

Ռեմպրանթ ստեղծագործեց բազմաթիւ դիմանկարներ, աստուածաշնչական եւ դիցաբանական թեմաներով պատկերներ: Լայն նախաձեռնած էր ձգելով՝ ստացաւ բազմաթիւ պատուէրներ. անոր մօտ ուսում ստացան բազմաթիւ շալկերուներ՝ ստեղծագործելով աստուածաշնչական պատկերներ եւ բացալայտելով մարդկային պարունակները: 1649ին ամուսնացաւ Հենարիկե Սրոֆֆելսի հետ, որմէ ունեցաւ աղջիկ մը՝ Կորնելիա:

Ռեմպրանթի փառքը աստիճանաբար սկսաւ խամբիլ եւ 1656ին ան հռչակուեցաւ անվանաւոր նկարատպագ: 1657-1658 տարիներուն անոր ամբողջ ունեցումը քանակապէս անհետացաւ: Անգլիացիները 1658ին տեղափոխուեցան Ամսթերտամի հրեական բնակատեղի, ուր կնոջ եւ դստեր հետ ապրեցաւ նեղուրբեան մէջ: 1663ին մահացաւ քառասունամեայ կիներ՝ Հենարիկե. իսկ 1668ին երիտասարդ գաւազը՝ Տիտոս: 4 Նոյեմբեր 1669ին, 63ամեայ հասակին մահացաւ Ռեմպրանթ:



«Coopman van Armenien» (Հայաստանի վաճառական), «Coopman van Persien» (Պարսկաստանի վաճառական) եւ «Armenische coopman» (հայ վաճառական). անոնցմէ հաւանաբար ամէնէն աւելի երկար գործունէութիւն ունեցողը «Armenische coopman» նաև էր, որուն մասին յիշատակութիւններ պահուած են մինչեւ 1689: Հաւանաբար այս նոյն ժամանակաշրջանին հրապարակ իջաւ «Smirnsche coopman» (Չմիւսիական վաճառական) նաւեր, որ 1714ին յիշուած է Չմիւսիոյ նաւահանգիստին մէջ խարսխած նաւերու շարքին. անիկա հաւանաբար հոլանտական դրօշի տակ գործող հայկական առեւտրական վերջին նաւը եղաւ:

ԱՄՊԵՏ ՄԱՆԵՒԿԵԱՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կ'ի փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԹԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՅՁԵՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀԱՅԱԿՈՒՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ
 (Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Ընդհանուր Կրթական Կենտրոնի)

Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի 2003-2004 տարեշրջանի հին քե նոր ուսանողներու արձանագրութիւնները կը շարունակուին առաւօտեան ժամը 10:00էն 1:00, Ծաղկաձորի Մելամբժոյն եւ Հայկ Արաւանեան Ճեմարանի մեր գրասենեակներէն ներս:

Հետաքրքրուողները կրնան անձամբ դիմել գրասենեակ, եւ կամ կապուիլ՝
 Հեռաձայն՝ 04-712603
 04-712604
 03-429685
 Fax: 04-712601
 E-mail: djemaran@inco.com.lb
 Մուտքի քննութիւնները՝ 1-3 Հոկտեմբեր 2003ին:
 Կերամուտ՝ 6 Հոկտեմբեր 2003ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

BALTAYAN ELECTRONIC

Մ. Ժամանակ
 Պարտէզ-Համար
 Մրանիտ քաղաք,
 հին. թիվ 6/262901

Բ. Ժամանակ
 Տար. հին. թիվ 1/259600

www.hamazkayin.com

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5548
 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|--|---|
| 1. Պարսկահայեր նահանգի գաւառներէն - Ռամկորէն՝ այր: | 1. Դանիակցական նախկին մամուլէն - Մէկը - Զի: |
| 2. Յոն դից-Դեմիտրիոսի: | 2. Ճարակատեղի: |
| 3. Սուտանի լիճերէն - «Ներաշխարհ»ին հեղինակը - Յուզական անձանկ: | 3. Այրուբեռնէն - Անուս, տղէտ: |
| 4. Հնարիչ - Դնդեր: | 4. Յուզական դերանունը - Ասիական ծով: |
| 5. Ուշ - Շին Ֆէյնի գինւորական թեր: | 5. Հած - Գառնաբերուկ: |
| 6. Բասանի թագաւորներէն - Քէն - Հողաշերտ: | 6. Իորայէլ Օրիի մահուան վայրը - Որովհետեւ: |
| 7. Շինանիւթի հանք: | 7. Արդի - Առաջին նաւապետը: |
| 8. Շարունակ - Գրարար՝ անոնց: | 8. Հայկական դրամանիչ - Բեւեռաքաշ: |
| 9. Որթատունկի կտրուած ճիւղ - Կամապաշտ: | 9. Ձիթ - Խիպ, պատկառանք: |
| 10. Իգալական օտար անուն - Քաղցած: | 10. Սովորական - Հայ գուսան: |
| 11. Գլխաւոր - Սուր ձայն - Չեղք: | 11. Մուկերու թակարդ - Պատեհուկներ: |

ԹԻՒ 5547
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ

ար 97

bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի	28,80 - 29,00 լ.ն.
Քուէյթեան տինար	5095,00 - 5120,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Ս.Մ. Էմիրութեանց տիրիամ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կիւն	229,00 - 239,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2488,00 - 2498,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1112,00 - 1117,00 լ.ն.
Թրքական լիրա	110,75 - 112,25 լ.ն.
Կիպրական փաունտ	2935,00 - 2960,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	13,40 - 13,50 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1112,00 - 1117,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1017,00 - 1022,00 լ.ն.
Եւրո	1725,00 - 1735,00 լ.ն.

- ՌՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	149,000 - 154,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	134,000 - 139,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	124,000 - 129,000 լ.ն.
Մէքսիկական փէսոս	713,000 - 733,000 լ.ն.
- Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 18,600,000 - 18,800,000 լ.ն.
- Մէկ օնս ոսկի 385,50 - 386,00 \$
- Մէկ օնս արծաթ 5,20 - 5,22 \$

- Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1.1465 - 1.1470
Քանադական տոլար	1.3520 - 1.3525
Չուիցերիական ֆրանք	1.3537 - 1.3547
Ճափոնական եէն	111.63 - 111.66
Մէկ սթերլին	1.6520 - 1.6525

Մէկ գոլար 560 դրամ

- ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիւնի Ա. ճշդում	Գիւնի Բ. ճշդում
Ա. կարգ 4,36	4,36
Բ. կարգ	

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կը լսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ)
 Աշխատանքի մարզին մէջ յետաձգուած գործերը շուտով պիտի կարենաք իրագործել: Օրը յարմար է կեանքի կոչելու նոր գաղափարներ: Այսօր եռանդուն պիտի ըլլաք:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
 Օրը ունի տարբեր տեսակի յաջողութիւններ: Ապագային պիտի նայիք աւելի վստահութեամբ՝ վիպական հանդիպում մը ունենալէ ետք: Ունիք նիւթական շահ: **ԵՐԿՈՒՆԵՆԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**
 Տեղափոխուելու կամ պտոյտի լաւ առիթ մը պիտի ներկայանայ ձեզի: Ձեր հարազատները ձեր բացակայութեան համար համոզուել դժուար պիտի ըլլայ: **ՆԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**
 Եթէ գործով կամ այլ պատճառով տեղափոխութիւն մը պիտի ունենաք, գայն կատարեցէք այսօր: Օրը շատ նպաստաւոր է ճամբորդելու համար: Եղբք իրապաշտ: **ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**
 Ձեր տնտեսական անելէն դուրս ելլելու միակ միջոցը նոր ժամանակ մը պահանջելն է ձեր պարտատերերէն: Ձեզի պիտի տան ձեր պահանջածը՝ նոր համաձայնագիրով: Պիտի ստանաք լաւ լուրեր: **ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**
 Ձեզի մօտիկ անձի մը պիտի օգնէք աւելի յստակ տեսնելու հարցերը, որպէսզի օրուան ընթացքը ըլլայ բնական: Ձեր իմաստութիւնը մեծ օգնութիւն մը պիտի ըլլայ անոր: **ԿՇԻՌԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**
 Շատ եռանդուն եւ ուժեղացող աշխատանք մը պիտի ունենաք, պիտի կարենաք ուշացած գործերը կատարել եւ ամբողջացնել առանց այդ մասին մտածելու: Օրը պիտի աւարտէք նոյնքան եռանդով: **ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**
 Բարեկամ մը ձեր նկատմամբ պիտի արտայայտէ իր չեղմ գագուտները, իսկ դուք պիտի գոհացնէք իր պահանջները: Օրը պիտի անցնի հեռու տաղուկէ: **ԱՂԵՂՆԱԻՌ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**
 Եթէ անգործ էք, աղուոր առիթ մը պիտի ներկայանայ աշխատանքի. անհատապէս, բայց իրաւ: Օրը պիտի բերէ բարիքներ, որոնց մասին բնաւ չէիք մտածած: **ԱՅՄԵՆՂԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**
 Մեծ ճամբորդութիւնները պիտի ըլլան նպաստաւոր, որովհետեւ այսօր ձեր կատարելիք ճամբորդութիւնը պիտի հովանաւորուի ձեզ պաշտպանող մուրակներով: **ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**
 Եթէ անձնական գործ մը ունիք, շատ գոհ պիտի մնաք այսօրուան ձեր ունեցած շահէն: Նոյն ձեռով շարունակեցէք ձեր աշխատանքը: Այս ամսուան համար, ձեր եկամուտը բարեբեր է: **ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**
 Չոյգերու միջեւ սիրալիք կեանակցութիւն պիտի ստեղծուի: Ձեզմէ իւրաքանչիւր մէկը միւսին պիտի նայի իր աչքին բիւրի պէս: Երանելի էք ու բախտաւոր:

ՕՐԱՏԵՏՐ
 ԵՐԳԱՀԱՆԴԵՍ / ՏՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

ՆՈՐԱՐԱՐ ԵՐԱԺԻՇՏ ՍԹԵՆԼԻ ԾՈՐՏԵՆ՝ ԵՌՆԵՍՔՈՒ ՄԷՁ

Լիբանանեան միակ էլոյթով մը այսօր երեկոյեան ժամը 8:30ին ԵՌՆԵՍՔՈՒՅԻ սրահին մէջ էլոյթ պիտի ունենայ ամերիկացի հոշակաւոր կիրթ առաջադէմ երաժիշտ Սթէնլի Ճորտըն: 1980ական թուականներէն ի վեր ճէյի աշխարհին մէջ յեղափոխութիւն մէջ յեղափոխութիւն երաժշտութիւն, ինչպէս՝ ռոք, պոփ, ճէյ եւ պարոք:

Սթէնլի Ճորտըն կիրթ աշխարհի արուեստին մէջ անհիւանդարձային փոփոխութիւն մը մտցուց, երբ սկսաւ երաժշտական այս գործիքին լարերը մատներով թրթուրելու փոխարէն տարածուած մատներով պարելու անոնց վրայ (թէֆին), այնպէս, ինչպէս կը նուագեն դաշնակը: Իր այս նորարարութեան համար ան երաժշտական քննադատներու կողմէ կը նկատուի ճիւղի հետադարձ շրջանի ամենէն կարեւոր կիրթ աշխարհի:

Աշխարհի գլխաւոր բեմերուն վրայ հանդէս եկած այս արուեստագէտը, որուն առաջին ձայնագրութիւնը՝ «Մէճիք թայ» (1985), տիրացած է նոյն տարուան ձայնագրութեան վաճառքի անոնցի դիտքին, ցարդ հրապարակած է մեծ թիւով այլ ձայնագրութեան եւս, որոնցմէ յիշենք՝ «Ֆայիլիս հոմ», «Սթէնլի Յորտըն» եւ «Քորնուելիս»:

Կիրթ աշխարհի ներկայիս իշխող այս հսկան իր երաժշտութիւնը կը բնորոշէ իրեն

նչ սոսկական արուեստ եւ ժամանցի միջոց, այլ՝ ներշնչում է հոգեկան հանգստութեան աղբիւր:

Հետաքրքրական է, որ այսօրուան իր էլոյթին անմիջապէս առաջ Սթէնլի Ճորտըն ունենայ լիբանանացի թերաճ մանուկներու հետ, որոնց համար ան պիտի նուագէ իր գործերէն: Նշենք, որ Սթէնլի Ճորտըն անոնցմէ երաժշտութեամբ բուժելու ամերիկեան ընկերակցութեան եւ այս մարպիւն մէջ վկայուած է իբրեւ մասնագէտ:

ՕՊԵՐԵՒՈՅ

ՉՈՐԵՔԱԲԹԻ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003

ՊԷՅՐՈՒԹ ՄԱՍԱՄ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵԿ՝ 29°C

ԳԻՇԵՐ՝ 22°C

ԽՈՆԱԻՌԻԹԻՒՆ՝ 64%

ԱՅՍՕՐ

- Պէյրուսի Փողոցի փառատոն, քաղաքին «Ուսանողի տոյն», ժամը 18:00ին, Մարտի փողոց:
- Նուագահանդէս՝ Սթէնլի Ճորտընի էլոյթ, ժամը 20:30ին, ԵՌՆԵՍՔՈՒ:
- Ջետիվան արուեստի ցուցահանդէս՝ Միքել Նավարոյի գործերը, «Սերվանթես» հիմնարկ, մինչեւ 6 Հոկտեմբեր:
- Յարգարման արուեստի ցուցահանդէս՝ «Մանուկ տիգրիս», Քրանսական Մշակութային կեդրոն, մինչեւ 3 Հոկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Վիզա», «Ժանիւ Ռուպէլ» ցուցասրահ, մինչեւ 26 Սեպտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ Ռիչի Նագալի գործերը, «Ջիւր» ցուցասրահ:

ԱԶԳԱԿ 50 ՏՆՄԻ ԵՄԻՆՁ
 24 Սեպտեմբեր 1953

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆ ԳԱՐԸՆԿԵ՞Ց ԵՂԱՄ ԱՄԷՆԷՆ ՀԱՄԲԱԻԱԻՌ ՀԱՅՐ ՍԱՐՈՅԵԱՆՆ Է, ԻՍԿ ԱՄԷՆԷՆ ԱՂԴԵՑԻԿ ՀԱՅՐ՝ ՄԻԿՈՅԵԱՆ...

Պոլտոյ «Հիւրիկէթ» բերքին մէջ Հիւրէթ Գեորգիան, շարունակելով իր յօդուածաշարը, այս անգամ Ա. Միկոյեանի մասին կը գրէ հետեւեալը.

Աշխարհի ամենէն ազդեցիկ հայը վերջապէս գահընկէց եղաւ: Հիւրէթ Գեորգիան աշխարհի թերթերուն մէջ մերիկներէն ալ մէջը ըլլալով «Միկոյեան» կը հոլովուի:

Ռուսիան ղեկավարող երեք մարդոցմէ՝ այս համբաւաւոր հայը ո՞վ է... Ես ալ ձեզի Անաստաս Միկոյեանի հետաքրքրական ու շահեկան կեանքը պատմեմ:

Դեռ մինչեւ երեկ «առեւտրական կախարհ» մը կը նկատուէր Միկոյեան, որուն մարքագործումը Բերիայի խնդիրէն ետք մեծագոյն արձագանգներուն ծնունդ տուաւ Ռուսիոյ մէջ: Այս խոշոր աչքով կատակախոս հայը փիլիսոփայ մէջ ունէր Ռուսիոյ մարդոց տնտեսութիւնը:

Ա. Համբարձումի պատերազմին ընթացքին, Ռուսիոյ աւելի քան 200 միլիոն մարդոց սննդեղէնին, նոյնիսկ բանակներուն պարեհաւորումին գրեթէ ինքնագլուխ պատասխանատու էր Ա. Միկոյեան: Ստալին կ'ըսէր, թէ՛ «մենք որքան մեր գէներալներ, նոյնքան եւ աւելի մեր տնտեսութեամբ մարտնչեցանք...»: Այս խօսքէն հետեւեցնելով կրնանք ըսել, որ այս օրերուն Ռուսիոյ իրական սպարապետը եւ իրական պետը այս փիլիսոփայ հայն էր:

Միկոյեան պատերազմէն ետք ալ չդադարեց իր գործունէութիւնը: Բազմաթիւ երկիրներու առեւտուրը ամերիկեան տոլարէն փոխակերպեց ռուսական ռուբլիի: Խորհրդային տարեկան առեւտուրը բարձրացուց 6 միլիարդի, ինչ որ նախապատերազմեանին քառապատիկն է:

Միկոյեան Սաքահիճի շրջակայքը



ԱՅՍՕՐ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

■1920- Սկիզբ հայ - թրքական պատերազմի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՃԱՏՐԱԿ

ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՒ ՓԱՇԻԿԵԱՆԻ ՄԻՋԵՒ ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐ

Հայաստանի ճատրակի տղոց ախոյեանութեան մրցաշարքին, Յրդ եւ նախաժերըին հանգրուանի մրցումներուն, թէեւ Գարբիէլ Սարգսեան ճերմակ քարերով հաւասարութիւն մը արձանագրեց Արման Փաշիկեանի հետ, սակայն վեց կէտով շարունակեց գրաւել ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը: Նոյնիման փաշիկեան կը գրաւէ երկրորդ դիրքը, կէս կէտով ետ մնալով Սարգսեանէն:

Այս մէկը կը նշանակէ, թէ Հայաստանի ախոյեանին ճակատագիրը պիտի վճռուի Յրդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն:

Այլ մրցումներու ընթացքին Աշոտ Անաստասեան հաւասարութիւն մը արձանագրեց Արսէն Եղիազարեանի հետ, մինչ Կարէն Ասրեան պարտութեան մատնեց Արտաշէս Մինասեանը: Անաստասեան եւ Ասրեան այժմ 5ական կէտով կը գրաւեն Յրդ եւ 4րդ դիրքերը, մինչ Մինասեան՝ Յրդ դիրքը (4,5 կէտով): Եղիազարեան եւ Դաւիթ Պետրոսեան, որոնք ունին 4ական կէտ, կը գրաւեն Յրդ եւ 7րդ դիրքերը:

Յրդ դիրքը գրաւող Լիլիթ Մկրտչեան, երէկ պարտութիւն մը կրելէ ետք Բենիամին Գալստեանէն, մէկ կէտով կը գրաւէ 10րդ եւ վերջին դիրքը: Յրդ դիրքը կը գրաւէ Գալստեան (3 կէտով), իսկ Յրդ դիրքը՝ Դաւիթ Յարութիւնեան (2 կէտով):

●ՊՈՒԼԿԱՐԻՈՅ մէջ տեղի ունեցած 14 տարեկանէն վար Եւրոպայի ճատրակի պատանիներու ախոյեանութեան մրցաշարքին իր կատարած վերջին մրցումին, Բրեւանէն Ջաւէն Անդրէասեան պարտութիւն մը կրելով մրցաշարքը աւարտեց չորրորդ դիրքին վրայ (6,5 կէտով):

Հակառակ ասոր, սակայն, Հայաստան յաջողեցաւ 10 տարեկանէն վար տեղի ունեցած մրցաշարքին տիրանալ ախոյեանութեան տիտղոսին, այդ ալ շնորհիւ՝ Սամուէլ Տէր Սահակեանի:

ՓԻՆԿ ՓՈՐԿ

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՏԱՆԵՐՆԵՐԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Յառաջիկայ 26 Սեպտեմբերէն 1 Հոկտեմբեր, Կիպրոսի մէջ տեղի պիտի ունենայ փինկ փոնկի միջազգային մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն վեցէն ինը երկիրներու կրտսերներու ազգային խումբերը (տղաք եւ աղջիկներ):

Տարին անգամ մը տեղի ունեցող այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերող երկիրներէն ցարդ հինգը միայն իրենց անունները փոխանցած են մրցաշարքը կազմակերպող երկրին: Անոնք են. Լիբանան, Սուրիա, Յորդանան, Տարո Կղզիներ, Յունաստան եւ վստահաբար հիւրընկալ երկիրը՝ Կիպրոս:

Լիբանանի տղոց կրտսերներու կազմին մաս պիտի կազմեն եօթ տղաք, իսկ աղջկանց կազմին՝ եօթ:

Աղջկանց կազմին մէջ թէեւ չկան Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներ, սակայն տղոց կազմին մաս կը կազմեն՝ երեք մարզիկներ: Անոնք են. Աւո Մուսնդոլեան, Մալէք Թաուիլ եւ Ժայլա Թաուիլ:

Ստորեւ՝ Լիբանանի մնացեալ մարզիկները. Ա.Ղ.Ի.Կ.Ն.ԵՐ. - Քրիսթի Ժալըլ, Ռուպա Պրսէյպես եւ Ռիթա Պրսէյպես:

Տ.Ղ.Ա.Բ. - Ռաշիտ Պրպպո, Ալֆրետ Նաժըմ, Քրիսթիան Ղոչ եւ Մուխթար Պիլալ:

ՇԻՐԸՐ ԵՐԿԱՐԱԶԳԵՅ ՆԻՒՔԵՍԸԼԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ ֆուտպոլի ազգային խումբին նախին յառաջապահ Էլըն Շիրըր երէկ մէկ տարիով քրկարաձգեց իր պայմանագրութիւնը իր ակումբին հետ, այսպիսով, համաձայն գտնուելով մինչեւ 2004 թուականը կրել Նիւքասթլի շապիկը:

Հակառակ անոր որ մարտի 9-ին Պոլի Ռոպըրթի վայրէջքէն Անգլիոյ բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան ընդհանուր դասաւորման մէջ կը լրաւէ 19րդ եւ նախաժերըին դիրքը, իր կատարած հինգ մրցումներուն ընթացքին արձանագրելով երեք հաւասարութիւն եւ կրելով երկու պարտութիւն, սակայն 33 տարեկան իմբայետ Շիրըր գոն մնալով իր կազմին երկարաձգեց իր պայմանագրութիւնը:

●ԻՏԱԼԱՅԻ յառաջապահ Ֆապրիցիո Ռաւանելլի շաբաթասկիւբին միացաւ Տանտիի (Սկովիա), երկու տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

Տանտիի մարտիչ՝ Ճիմ Տաֆի Ռաւանելլիի (34 տարեկան) «Տէն Փարք» ժամանումէն ետք յայտարարեց, թէ յոյսով է, որ ան իր ունեցած փորձառութեամբ մեծապէս պիտի նպաստէ խումբին, որ այժմ կը գրաւէ դասաւորման չորրորդ դիրքը:

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ՄՐՅԱՇԱՐՔ

ԱՅՍՕՐ՝ Ա. ԸԱՆԳՐՈՒԱՆԻ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ֆուտպոլի մցաշարքին Ա. հանգրուանի երթի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան շուրջ 40 ճակատումներ, որոնց ընթացքին վստահաբար, որ տեղի պիտի ունենան հետաքրքրական եւ տարահան դիպումներ: Նշենք, թէ դարձի մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ Հոկտեմբերի կիսուն:

Յառաջիկայ Հոկտեմբեր 11ին տեղի ունենալիք Թուրքիա - Անգլիա մրցումին (Երո - 2004ի Կտումի մրցաշարք) նմանը կը սպասուի ըլլալ Կէնչլիբարիլիկի - Պլէքպըրն մրցումը, որ տեղի պիտի ունենայ Թուրքիոյ մէջ: Կ'ակնկալուի, որ անգլիացիները ինչու հարիւր համակիրներ ներկայ ըլլան այս մրցումին...

Մրցումին նախօրեակին անգլիական կազմին պատասխանատուները թրքական ոստիկանութիւնը տեղեակ պահեցին, որ ինչպէս Անգլիոյ մէջ, այդպէս ալ Թուրքիոյ մէջ իրենց համակիրները ըլլան կարգապահ:

Պարսելունս հիւրը

պիտի ըլլալ Փուշովի Օլիմպիա Լիուպիա- (Սլովաքիա), մինչ Լիվերպոլ պիտի այցելէ նիս):

Ստորեւ՝ այսօր տեղի ունենալիք կարգ մը կարեւորագոյն մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուի ժամով).

- ԺԱՄ
- Տանտի (Սկովիա) - Փերուճիա (Իտալիա) 18:00
 - Կէնչլիբարիլիկի (Թուրքիա) - Պլէքպըրն (Անգլիա) 19:00
 - Հերթա Պերլին (Գերմանիա) - Կրոքլին (Լեհաստան) 18:30
 - Սքոփիէ (Մակեդոնիա) - Լանս (Ֆրանսա) 19:00
 - Մեթալուրկ (Ուքրաինա) - Փարմա (Իտալիա) 20:00
 - Քալչըրալաուրըրն (Գերմ.) - Թեփլիսէ (Չեխիա) 19:15
 - Փուշով (Սլովաքիա) - Պարսելունս (Սպանիա) 21:00
 - Լա Լուվիէր (Պելճիք) - Պենֆիքա (Փորթուգալ) 21:00
 - Օլիմպիա Լիուպիա (Սլովենիա) - Լիվերպոլ (Անգլիա) 21:15
 - Սոլնա (Շուէտ) - Վայնսիս (Սպանիա) 21:30
 - Ափոն Երկոսիա (Կիպրոս) - Մայորքա (Սպանիա) 22:30
 - Աւստրիա Վիեննա (Աւստրիա) - Պորուսիա Տորթուս (Գերմանիա) 21:40
 - Նիւքասթլ (Անգլիա) - Պրեստոն (Հոլանտա) 20:45
 - Սաութհեմթըրն (Անգլիա) - Շքէրուա Պուրթէշ (Ռումանիա) 20:45
 - Ա. Էս. Ռոմա (Իտալիա) - Նէօշաթէլ (Չեխիա) 21:45
 - Մանչեսթըր Սիթի (Անգլիա) - Լոքերէն (Պելճիք) 21:00
 - Սփորթինկ Լիպոն (Փորթուգալ) - Մալմօ (Շուէտ) 22:00
 - Սոֆիա Բանակայիններ (Պուլկարիա) - Թորփեմո Մուկուա (Ռուսիա) 18:00
 - Սալվադոր (Աւստրիա) - Ռոտինգէլ (Իտալիա) 18:00

ՐԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԵՐՐՈՊԱՅԻ ԿՐՏԱՆԵՐՆԵՐՈՒ ԶՏՈՒՄԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Յառաջիկայ 30 Սեպտեմբերէն 4 Հոկտեմբեր, Քիբեւի մէջ տեղի պիտի ունենայ 19 տարեկանէն վար Եւրոպայի ֆուտպոլի ախոյեանութեան գտումի մրցաշարքը:

Մրցաշարքին իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը, իր խմբակին մէջ ունենալով Ֆրանսան, Ուքրաինան եւ Պոնտիան:

ԹԵՆԻՍ

ՍԱՐԳՍԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԻՈՐՄԱՆ ՄԷՋ ՄԵԾ ՈՍՏՈՒՄ ԿԱՏԱՐԵՅ

Թենիսի միջազգային ֆետերասիոնին կողմէ հրապարակուած տղոց աշխարհի ընդհանուր դասաւորման մէջ, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան կարեւոր ոստում մը կատարեց, երբ 75րդ դիրքէն բարձրացաւ 47րդ դիրքը:

ԻՏԱԼԻՈՅ ՄԷՋ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԽՍՏԱՆԱՅ



Իտալիոյ կառավարութիւնը երէկ Իտալիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին պահանջեց աւելի խստացնել ախոյեանութեան մրցումներուն ընթացքին ապահովութեան ուժերուն եւ ոստիկաններուն ներկայութիւնը, որպէսզի անցեալ Շարաթ օրուան նման խուլիկանութեան դէպքեր չպատահին:


Իտալիոյ Բ. դասակարգի ախոյեանութեան գծով տեղի ունեցած Աւելինօ-Նափոլի հարաւային տերապիս ընթացքին տեղի ունեցած խուլիկաններուն, անցեալ Շարաթ օր Նափոլիի 19 տարեկան համակիր մը՝ Սերճիօ Էրքալոն մահացաւ, երբ դաշտին քրիպլուցէն վար ինկալ: Բացի անոր մահէն բազմաթիւ ոստիկաններ գաւազաններու հարուածներ ստանալով, կը փորձէին դաշտէն դուրս փախուստի ելք մը գտնել:

Հակառակ անոր որ դաշտին մէջ գտնուող գաղտնիքայինները յայտնաբերած են երկու հարիւր համակիրներու ինքնութիւնը, սակայն ցարդ միայն մէկ համակիր ձերբակալուած է:

Իտալիոյ ներքին գործոց նախարար Ճիւզեփէ Փիսանի բոլոր ակումբներուն պատասխանատուներէն պահանջեց հարկ եղած ձեւը գտնել իրենց համակիրները զսպելու համար:

ՀԱՏԸՂ ՊԱՇՏՈՆԱԶՐԿՈՒԵՑԱԻ

Թոթենհամի մարտիչ Կլէն Հատըլ շաբաթասկիւբին պաշտօնանկ եղաւ իր ակումբին կողմէ, Անգլիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 2003-2004 եղանակը բաւական ձախող կերպով սկսելուն համար:



Կլէն Հատըլ

Յարդ իր կատարած վեց մրցումներուն ընթացքին մէկ յաղթանակ եւ մէկ հաւասարութիւն արձանագրած Թոթենհամ, անցեալ շաբաթավերջին կրեց եղանակի իր չորրորդ պարտութիւնը, այդ ալ իր դաշտին վրայ, իր հիւրէն՝ Սաութհեմթըրնին (3-1):

Անգլիոյ ֆուտպոլի ազգային խումբին նախկին մարտիչ Է. Շալտըլ այսպիսով կը դառնայ առաջին մարտիչը, որ այս եղանակին կը կորսնցնէ իր պաշտօնը:

Անոր պաշտօնազրկման յուրը հապի իմացած, Թոթենհամ եւ Յրանսայի ֆուտպոլի ազգային խումբին նախկին մարտիչ՝ Տալիտ Ժինոյա, իր պատրաստակամութիւնը յայտնեց, փափաքելով վերադառնալ «Ուայթ Հարթ Լէյն», սակայն իբրեւ մարտիչ եւ ոչ թէ իբրեւ մարտիչ:

36 տարեկան Ժինոյա նախապէս մաս կազմած է՝ Փարիզ Սեն Տերմինի, Նիւքասթլի եւ Ասթոն Վիլլայի: Նշենք, թէ բրիտանական մամուլին համաձայն, շատ հաւանաբար Հատըլի յաջորդը ըլլալ, Պարսելունայի նախկին մարտիչ՝ Ռատուիթ Անթիշ:

ՀԵՏԵՆԱՄԱՍ՝ ՄՊԱՆԻՈՅ ՇՐՏԱՎԱԶՔ

ՔԱՐՏԵՆԱՍ՝ 16ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՅԱՂԹԱԿԱՆԸ



Զարտեմաս, որ կը հասնի ժամանակահիմ



Նոզալ

Օրուան մը դադարէ ետք, երէկ տեղի ունեցաւ Սպանիոյ հեծելարշաւի շրջավազքին (Վուէլթա) 16րդ հանգրուանի մրցումը՝ Խաչէն Սիերա Նեւա-տա (162 քմ.): Անիկա վերջ գտաւ թրոմպիացի Ֆելիքս Քարտենասի (Լապարքա Պարէ) յաղթանակով, որ արձանագրեց 4 ժամ 9' 35" արդիւնք մը:

(Սպանիա) 54 ժամ 13' 10" 03" ուշ
2.- Իկոր Կոնգալես Տը Կալտեանօ (Սպանիա) 3'
3.- Ռոպերթո Զերաս (Սպանիա) 3' 09" ուշ

ՍՈԼՍԹԻԱՐ ԿՐՆԱՅ ԵՐԿԱՐ ԱՏԵՆ ՀԵՌՈՒ ՄՆԱԸ ԴԱՇՏԵՐԷՆ

Մանչեսթըր ԵՌՆԱՅԵՐ ԵՌՆԱՅԻՆ ՆՈՐՎԵԿԻԱԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻ յառաջապահ Օլէ Կիւնար Սոլսթիար շատ հաւանաբար մինչեւ 2003 տարուան աւարտը չկարենայ յաշտ ներկայանալ, նկատի ունենալով որ ան ծնուկի վիրաբուժութեան կրնայ ենթարկուիլ:



Ակումբին պատասխանատուները յայտնեցին, որ անոր վիրաբուժութիւնը անհրաժեշտ կը նկատուի, որպէսզի ան եղանակին կէսէն անդին կեդրոնական ախոյեանութեան մրցումներուն վրայ:

30 տարեկան Սոլսթիար անցեալ եղանակին իր ակումբին հետ ախոյեանութեան մրցումներուն նշանակեց ինը կող:

1.- Իսիտրօ Նոզալ

ԸՍՏ ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ ԹԵՐԹԻ ՄԸ

ԻԶԶԵԹ ԻՊՐԱՀԻՄ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԸԼԼԱԼՈՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ



Յորդանան էան «Արապ Ալ-Եսամ» օրաթերթը հաղորդեց, որ Իրաքի նախկին վարչակարգին թի երկու անձնաւորութիւնը՝ Իվպէթ Իպրահիմ անձնատուր Ըլլալու բանակցութիւններ կը կատարէ ամերիկեան ուժերուն հետ: Իպրահիմի ընտանիքին մօտիկ աղբիւրներ յայտնեցին, որ բանակցութիւնները հասած են կարեւոր հանգրիւանի մը: Անոնք աւելցուցին, որ անձնատուր Ըլլալու համար նախկին փոխ նախագահը կը պահանջէ, որ իր անունը ջնջուի ամերիկացիներուն կողմէ հետապնդող անուանացանկէն:

ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՐԵՔ ԻՐԱՔՅԻՆԵՐ ՄՊԱՆՆԵՑԻՆ

Ամերիկեան ուժեր երեք իրաքցիներ սպաննեցին եւ երեք հոգի ալ վիրաւորեցին Ֆայլու-ճայի մօտակայ գիւղի մը մէջ: Ամերիկեան ուժերու կեդրոնական հրամանատարութիւնը հաստատեց, որ սպաննած է իրաքցի մը միջադէպի մը ընթացքին, որուն մասնակցած է ամերիկեան օդանւու մը: Ըստ ականատեսներու, սակայն, գործողութեան մասնակցած են օդանւու եւ ուղիաթիւններ:

Միժր գիւղի բնակիչներ յայտնեցին, որ արեւածագէն առաջ, հրասայլեր շրջափակած են գիւղը եւ պիտուրները սկսած են կրակ բանալ: Անոնց միացած են ուղիաթիւններ, որոնք հրթիռներ արձակած են բնակարաններուն վրայ: «ԱՅՓ»-ի թղթակից մը, որ ներկայ էր, ըսաւ թէ ուժերուն ու հրթիռներուն թիրախը երկու բնակարաններ էին, որոնցմէ մէկը ամերիկեան ուժերուն կողմէ խուլարկութեան ենթարկուած էր մէկ օր առաջ:

Ամերիկեան աղբիւրներ սակայն տարբեր բան հաղորդեցին: Ըստ այդ աղբիւրներուն, ամերիկացի պիտուրներու վրայ կրակ բացուած է Միժր գիւղէն եւ թէ ուղիաթիւն մը հակադարձած է՝ մէկ իրաքցի սպաննելով: Միժր բնակիչներուն հաղորդած տեղեկութեանց համաձայն, երեք պոռ եւ երեք վիրաւոր ինկած են:

● ԻՐԱՔԻ իշխող խորհուրդին ընթացիկ նստաշրջանի նախագահը՝ Ահմէտ ժալապի ամերիկացիներէն կը պահանջէ յաւելեալ իշխանութիւն տալ խորհուրդին, յատկապէս էլեւմուտական մարզին մէջ: Ժալապի կ'ակնարկէր քարիւղի եկամտաւոր, ինչպէս նաեւ՝ ապահովութիւնը ստանձնելու ծրագիրին:

Ժալապի աւելցուց, որ ներքին ապահովութիւնը պիտի չամրապնդուի եթէ իրաքցիներ աւելի մասնակից չդառնան: Ժալապի պահանջեց, որ իշխանութեան փոխանցուը անմիջապէս տեղի ունենայ եւ օտար նոր ուժեր չժամանեն Իրաք:

(ԱՅՓ)

ԱՆԳԱՐԱՅԻ ԿԱՏԱՐՈՒՈՂ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՓՈՒՍԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՇԱՇՏ ԱՉՔՈՎ ՉԻ ԴԻՏՈՒԻՐ ԹՈՒՐԷ ԸՆԴԴԻՍԱԴԻՐՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԱՆԳԱՐԱ, 23 (ԱՅՓ).- Թուրքիոյ ընդդիմադիր գլխաւոր կուսակցութիւնը Երեքշաբթի օր քննադատած է Իրաքի կապուած ամերիկեան փոխատուութեան առաջարկը:

Խորհրդարանին մէջ ընդդիմադիր ժողովուրդին Հանրապետական կուսակցութեան ղեկավար Օկիւլ Օյան յայտնած է, թէ Մ. Նահանգներու հետ գոյացած համաձայնութեամբ, Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը «կապանքի տակ առնուած է»:

Մ. Նահանգներու գանձատան նախարար Ճոն Սնօ Երկուշաբթի օր յայտարարած էր, թէ Ուաշինկթըն 8,5 միլիարտ տոլար փոխատուութիւն մը պիտի կատարէ Թուրքիոյ, պայմանաւ որ Անգարա Իրաքի գծով «գործակցի»:

«Ինքզինք յարգող արտաքին որեւէ քաղաքականութիւն պէտք է էլեւմուտական հատուցումը անջատէ քաղաքական հարցերէն», ըսած է Օյան:

Ուաշինկթըն Անգարայի վրայ ճնշում կը բանեցնէ, որպէսզի անիկա Իրաք ուժեր ղրկէ, սակայն վարչապետ Ռեճէփ Թայիփ Էրտողանի կառավարութիւնը ցարդ զգուշացած է այդ գծով որոշում տալէ՝ ներքին գետնի վրայ առարկութիւններու պատճառով:

Թէ՛ Անգարա եւ թէ՛ Ուաշինկթըն շեշտած են, որ փոխատուութեան նպատակը Թուրքիոյ օժանդակել է Իրաքի պատերապմին պատճառով արձանագրուած տնտեսական վնասին համար եւ թէ անիկա Իրաքի մէջ թրքական պիտուրական մասնակցութենէն կախեալ չէ:

Սնօ Տուպայի մէջ Երկուշաբթի օր յայտնած է, թէ վարկը պիտի հայթայթուի միայն եթէ ամերիկեան արտաքին գործոց նախարարութեան եւ Փենթագոնի դատողութեամբ Թուրքիա Իրաքի գծով «գործակցած» ըլլայ: Թրքական բազմաթիւ թերթեր Երեքշաբթի օր նոյնպէս կապ տեսած են փոխատուութեան եւ Իրաք պիտուրներու առաքման միջեւ:

Էրտողանի կառավարութիւնը արդէն իսկ յայտնած է, թէ համաձայն է Իրաք շուրջ 10 հազար պիտուր ղրկելու՝ հոն կայունութիւնը վերահաստատելու համար:

Արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ յայտնած է, թէ խորհրդարանին պիտի առաջարկուի ուժերուն առաքման գծով Հոկտեմբերի կէսերուն քուէարկել:

Մինչ այդ, թրքական սակարանային շուկաները խանդավառ կերպով ողջունած են Երկուշաբթի օրուան փոխատուութեան յայտարարութիւնը:

ՌՈՒՍԻԱ ԽԸՐԻՆԸՉԻՍՏԱՆԻ ՄԷՋ ԽԱՐԻՍԻ ՄԸ ՊԻՏԻ ՀԱՍՏԱՏԷ

Ռուսիա եւ Խըրիւր-պիտան Երկուշաբթի օր կ'ըսած են պաշտօնական համաձայնութիւն մը, որ կ'արտօնէ Մոսկուայի՝ նախկին խորհրդային հանրապետութեան մէջ խարիսի մը հաստատել:

Խըրիւր-պիտան տենք, որ կացութիւնը կայուն է, սակայն ոչ կարգի: Հոն մեր պիտուրական ներկայութեան կարիքը կայ թէ՛ Ռուսիոյ եւ թէ՛ մեր շրջանային գործակիցներուն համար: Ընդգրծած է ան:

«Փաստ է այն կարեւոր դերին, զոր Ռուսիա կը խաղայ՝ ապահովութեան երաշխարան մէջ, ոչ միայն Խըրիւր-պիտանի, այլ նաեւ ամբողջ Կեդրոնական Ասիոյ մէջ, որ նոր սպառնալիքներ կը դիմագրաւէ»:

Ըստ համաձայնութեան, որ անցեալ տարուան Դեկտեմբերին գոյացած է, Ռուսիա Խըրիւրպիտանի Քանթ քաղաքին մէջ «Սու-27» եւ «Սու-25» տիպի ռազմական 10 օդանւու պիտի հաստատէ: Խըրիւրպիտանի նախագահ Ասքար Բաբեւ յայտնած է, թէ Ան աւելցուցած է. «Գի-

թեան, որ անցեալ տարուան Դեկտեմբերին գոյացած է, Ռուսիա Խըրիւրպիտանի Քանթ քաղաքին մէջ «Սու-27» եւ «Սու-25» տիպի ռազմական 10 օդանւու պիտի հաստատէ: Խըրիւրպիտանի նախագահ Ասքար Բաբեւ յայտնած է, թէ համաձայնութիւնը

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգեյ Իվանով յայտնած է, թէ նոր խարիսի պիտի ըլլայ առաջինը, զոր Ռուսիա պիտի բանալ 12 տարուան իր գոյութեան մէջ, ակնկալելով 1991ի Խորհրդային Միութեան քայքայումին: (ԱՅՓ)

ՄՈՍԿՈՒԱ - ՌՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՔԱՐԻՒՂԻ ՄԱՐԶԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Ս.ՍԹՐԱՉՊՈՒՐԿ, 23 (ԱՅՓ).- Ռուսիա եւ Մ. Նահանգներ թափ պիտի տան իրենց գործակցութեան՝ Մ. Նահանգներու կողմէ ռուսական քարիւղի եւ կապի գնումներուն պարկ տալու նպատակով, երկու երկիրներուն ուժանիւթի մարչի պատասխանատուներուն միջեւ Ս. Փեթերսպուրկի մէջ կ'ըսուած համաձայնութեան մը հիմամբ:



Երկուսն ալ վեհաժողովին ընթացքին ամերիկացի պաշտօնատարներ վերահաստատած են իրենց փոխակցութիւնը Ռուսիոյ ծայրագոյն հիւսիս-Մուրմանսք հասնող քարիւղատար խողովակի մը կառուցման հանդէպ, ինչ որ պիտի դիրացնէ ռուսական հում քարիւղին ամերիկեան շուկաներուն հայթայթումը: Երկու կողմերը երրորդ վեհաժողով մը պիտի գումարեն զալ տարի Մ. Նահանգներու մէջ: Առաջինը կայացած էր Հիւսիսային մէջ:

ՅԱՌԱՋԻՍԱՂԱՅՔ ԴԷՊԻ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՉԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԷՋ 5

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՋ ԵՐԵՔ ՔԻՐՏԵՐ ՄՊԱՆՆՈՒԱԾ
ՊՈԼԻՍ, 23 (ԱՅՓ).- Կեդրոնական Թուրքիոյ մէջ բանակը սպաննած է երեք անձեր՝ ՔԱԿԻ անդամներ ըլլալու կասկածներով, հաղորդած է «Անատոլու» լրատու գործակալութիւնը Երեքշաբթի օր: Միւս կողմէ, ռուսիկանութիւնը քրտական ՏԵՀՍՓ կուսակցութեան 15 անդամներ ձերբակալած է, մինչ անոնք հարաւ-արեւելեան Թուրքիոյ մէջ շրջանին մէջ մամլոյ սաւառի մը կու տային, յայտնած է «Անատոլու»:

ԱՄԹԱՆԱՅԻ ՄԷՋ ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ ԱՀԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴ ՉԻ ՏԱՐ ԿԸ ԲԱՅԱՏՐԵՆ ԻՍԼԱՄ ԿՐՕՆԱԿԱՆՆԵՐ

ԱՄԹԱՆԱ, 23 (ԱՅՓ).- Ղապիստանի մայրաքաղաք Ասթանայի մէջ տեղի ունեցած կրօնական ղեկավարներու մէկ ժողովին, իսլամ ներկայացուցիչներ Երեքշաբթի օր փորձած են փարատել այն տեսակետը, թէ իսլամութիւնը ահաբեկչութեան ծնունդ կու տայ, շեշտելով, որ իրենց կրօնը հանդուրժողութեան եւ ոչ վայրագութեան կրօնք մըն է:

Անոնք կը խօսէին երկօրեայ համագումարի մը ընթացքին, որուն ներկայ էին 17 կրօնքներ ներկայացուցիչներ: Մ. Նահանգներու մէջ 11 Սեպտեմբեր 2001ի յարձակումներէն ետք իսլամութիւնը եւ Արեւմուտքի մէջ անոր ըմբռումը խօսքերուն յաճախակիօրէն արծարծուած նիւթերէն եղած են:

Սէուտցի ներկայացուցիչներ յատկապէս պաշտպանած են իրենց երկիրը յարձակումներուն մէջ սէուտական մեղսակցութեան գծով տարագոյն ամբաստանութեանց դէմ:

Ս. Արաբիոյ արդարութեան նախարարը շեշտած է, թէ ահաբեկչութիւնը յատուկ կրօնքի մը պէտք չէ կապել, ըսելով, որ անիկա մարդկութեան ղէմ ոճիր մըն է, որ մարդկութեան սկզբունքները կը բռնաբարէ:

Ան ընդգծած է, որ Ռիատ դատապարտած է 11 Սեպտեմբերի յարձակումները եւ ապահովութիւն ու խաղաղութիւն երաշխարարելու նպատակով ի գործ դրուող ճիգերուն մասնակցած: Վատիկանի ներկայացուցիչը՝ կարտինալ Ճոզէֆ Թոմօ շեշտած է արդարութեան, մարդկային իրաւունքներու, աղօթքի եւ կրթութեան դերը տագնապներէ խուսափելու մէջ:

ԻՐԱՔՅԻՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ՉԵՆ ԻՆՔՆԱՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԿԸՍԷ ՓՈԼ ՊՐԵՄԵՐ



Իրաքի ամերիկացի կառավարիչը՝ Փոլ Պրեմերը զգուշացուց, որ ժամանակը տակաւին չէ հասած, որպէսզի իրաքցի ժողովուրդը ինքզինք ղեկավարէ եւ ինքնիշխան դառնայ:

Պրեմերը, որ կը խօսէր պատկերասփռուած հարցազրոյցի մը ընթացքին, ըսաւ, որ Իրաք ինքնիշխան ու ինքնավար պիտի դառնայ, երբ իրաքեան նոր սահմանադրութիւնը վաւերացուի եւ երբ ժողովրդավար ընտրութիւններ տեղի ունենան:

DAY WATER advertisement featuring a water filter and a water dispenser. Text includes 'RECOMENDED FOR BABIES', 'Free delivery', and 'Approved By Rain Water'.